

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՓԱՎԱՍՏՈՍ ԲՈՒՋԱՆԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԴԻՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Փավոսոս Բուզանդի, Հայոց պատմություն, քաղաքաբանություն, ներածություն և ծանոթություններ ակադեմիկոս Սեկիազա Մալխասյանցի,
Հայպետհրատ, Երևան, 1947 թվ

Փավոսոս Բուզանդի պատմությունը մեր անցյալի դրականության շատ նշանավոր հիշատակարաններից մեկն է, որը ամենայն իրավամբ 19 և 20-րդ դարերի հայ բանասիրության լուրջ ուշադրության է արժանացել: Այդ հետաքրքրականությունը դեպի Փավոսոս Բուզանդի «Հայոց պատմությունը» ունի 3 հիմնական պատճառներ.

1. Որ 4-րդ դարի հայոց պատմության համար չկա մի այլ հիշատակարան, բացի Բուզանդի այս գրքից, որ ոչ միայն ներկայացնում է մեր ժողովրդի քաղաքական և կրոնական կյանքի պատմությունը, այլև ներքին կյանքի, տնտեսական որոշ հարաբերությունների, կենցաղի, որ մեր պատմագրության մեջ այնքան խիստ պակասավոր է:

2. Մյուս հիմնական պատճառը այն է, որ Բուզանդի պատմությունը հիմնված է մասամբ ժողովրդական բանավոր գրույցների, սերնդից սերունդ անցած առասպելախառն պատմությունների վրա, որպիսի պատմությունը համեմատած մեր մյուս պատմագիրների չոր ու ցամաք հիշատակարանների հետ, անշուշտ, զոհն է լինում ոչ պատմական առեակետից, այլ ժողովրդական, բանահյուսական, առասպելաբանության, ժողովուրդների հասկացողությունների և ըմբռնումների, նրանց ներքին կյանքի մեկնաբանման ու բացատրման համար գերակշիռ արժեք ու առաջնություն է ներկայացնում, եթե չասենք, որ Բուզանդի «Պատմությունը» որպես պատմական հիշատակարան էլ շատ կարևոր է և որ աղբյուր է ծառայել հետագա բազմաթիվ պատմիչների համար:

3. Հետաքրքրականութիւնն շարժող 3-րդ պատճառը Բու-
զանդի լեզունն է, որը, համապատասխան յուր նյութին, յուր-
հասնուկ նշանակութիւնն ունի մեր ժողովրդական բարբառների,
մեր աշխարհաբար լեզունների պատմութեան ու նրանց դարգաց-
ման ուսումնասիրութեան համար: Հարեա՞տ ոչ միայն ժողովրդա-
կան ռճերով ու դարձվածքներով, այլև ժողովրդական բառակազ-
մութեամբ, կցական դիպուկ բարդութիւններով, մեր գլուղա-
ցու բառերով ու խոսքաշինութեամբ և նրա ազատ ու անկաշ-
կանդ շարահյուսութեամբ, որտեղ բաղադրութիւնները, զեղչում-
ները (էլիպսիս), անհետնողականութիւնները (անակոյուէֆ), պե-
րիֆրազային դարձվածքները հետևում են միմյանց ազատ, ան-
կաշկանդ, զերծ գրքայնութիւնից, կազապարված շարունիզմից,
ատանդարտ տրտահայտութիւններից: Ինչպես յուր նյութի շա-
րագրման մեջ հեղինակը արհամարհել է կեղծ բարեպաշտու-
թիւնը ու շարագրել է այնպես, որպես մտածել կամ լսել ու
կարդացել այս կամ այն մարդու մասին (Պապ, Հովհան Եպիս-
կոպոս, Արշակ, Տիրիթ), այնպես էլ յուր լեզվի նկատմամբ եղել
է ազատ՝ առանց հաշիվ տանելու տիրող գրական ճաշակն ու
սճք, քերականութիւնն ու կանոնները:

Այս «Պատմութեան» գրքի հեղինակը ուրիշ ոչ ոք չէ, եթե
ոչ մի հայ գրագետ գլուղացի, ուշիմ, պատմութիւններ, գրույցներ
սիրող, հավաքող ու մաքում պահող մի հայ մարդ, որ այնքան
է բարձրացել իր միջավայրից, մինչև որ հասել է հայոց պատ-
մութիւնն գրելու բարձր գիտակցութեանը: Սրան անշուշտ շատ
մեծ խթան է ծառայել գրական այն մեծ շարժումը, գրագիտու-
թիւնն սովորելու և գիրք գրելու այն մեծ հրայրքը, որ առաջ
էր եկել 5-րդ դարի Հայաստանում շնորհիվ հանճարեղ Մեսրոպի
ու Սահակի:

Անցյալի բանասիրութիւնը բազմաթիվ տարբեր ու իրա-
րո՞մեքծ կարծիքներ է հայտնել «Բուզանդարան» գրքի ու նրա
հեղինակի վերաբերյալ: այդ կարծիքները, ինչպես ասացինք,
ծայրահեղորեն իրար հակառակ են և ժխտող: Բոլոր կարծիք-
ները համառոտ կերպով ընթացն են մեր գրախոսութեան նյութ
դարձող Բուզանդի ներկա աշխարհաբար թարգմանութեան առա-
ջադրում, և տրված է նրանց քննադատութիւնը առաջնորդով
գիտնական բանասեր հանգուցյալ Ստեփան Մալխասյանցի կող-
մից: Ուսումնասիրելով Բուզանդի մասին եղած բովանդակաշարի
գրքերն ու հոգվածները, մենք գալիս ենք այն եզրակացութեան,

որ Բուզանդի գրքի ու հեղինակի վերաբերյալ ամենաճիշտ ու իրական մոտեցում հանդես է բերել ներկա հրատարակության թարգմանիչ հանդուցյալ ակադեմիկոսը: Դեռ սրանից 52 տարի առաջ Ստ. Մալխասյանցը հրատարակեց մի ուսումնասիրություն¹, որտեղ նա, հակառակ իրենից առաջ բոլոր բանասերներին և դիտանականներին, հանգեց հետևյալ միանգամայն ճիշտ եզրակացության, իհարկե նախօրոք յուր գրույթները մանրամասն փաստարկելով:

Ըստ Մալխասյանցի տեսակետի «Բուզանդարանի» հեղինակը 4-րդ գրքի Գ, 5-րդ գրքի ԻԳ և 6-րդ գրքի Ե, Զ գլուխներում հիշատակված Փավստոս հպիսկոպոսը չէ: Ուստի նա հույն չէ: Արա համար հանդուցյալ գիտնականը հակադրվում է մի շարք բանասերներին, որոնք հիմնվելով երրորդ դպրության վերջաբանի վրա, որտեղ գրված է. «Կանոնք փախստեայք (ուրիշները սուղգում են Փաւստեայք)» Բուզանդեայ ժամանակագիր մեծի պատմագրին, որ եր ժամանակագիր Յուլիանը: Իրավացիորեն ժխտվում է այս վերջաբանի խոհությունը, որը կարող էր հետագայում ամփոփվել շնորհիվ այն բանի, որ գիրքը կոչվում է «Բուզանդարան պատմութիւնք». նախ այստեղ հիշինք, որ մեր Մատենագարանի մի ձեռագիր (№ 3079), որ շատ ուշ շրջանի պրիություն է, բայց որ ըստ երևույթին արտագրված է ավելի հին մի ձեռագրից, տալիս է ուրիշ ընթերցվածք վերևում ընդգծված նախադասության. «Որ էր ժամանակին Յուլիանց». եթե այս համարենք նույնիսկ սխալ ընթերցվածք, դարձյալ կասկածելի է մնում «փախստեայք» բառը, որ մեր հիշած գրչագրում գրված է «փախստեայք», այսինքն այն, որ գրքի հեղինակի անունը նման ձևով չէր կարող սղավաղվել և տարբեր ձեռագրերում տարբեր գրություններ ստացվել: Հետո մի ուրիշ հանգամանք էլ կա, որին պետք է ուշադրություն դարձնել: Հանդուցյալ գիտնականը ենթադրում է, թե վերջաբանության մեջ հիշված «Փաւստոս Բուզանդ» անունը գրվել է շնորհիվ այն բանի, որ գրքի վերնագիրն այդպես է եղել: Զարմանալին այն է, որ մեր բանասերներն այդքան մանրամասն զբաղվել են Բուզանդի հարցով, բայց ոչ մեկը, բացառյալ Նորայր Բյուզանդացուց, որի ձեռքի տակ միայն մի ձեռագիր է եղել, ձեռագիրների ուսումնասիրությամբ չեն զբաղվել: Մեր ձեռքի տակ գտնվող երեք ձեռագիրներ բոլորովին

¹ Ուսումնասիրություն Փավստոս Բյուզանդի պատմության, 1896 թիվ. Վիեննա:

«Փաւստոս» բառը չեն հիշատակում ոչ գրքի սկզբում և ոչ էլ որևէ դպրութեան գլխում, բացի վերևում բերված աղավաղյալ «փախստեայք», «փախստեայք» ձևերից, որ առանց կասկածի բնագրի հետ ոչ մի առնչութիւն չունեն:

Էլ ավելին. գրքի սկզբում, այսինքն երրորդ դպրութեան համարված գլխում, չկա նաև «Բուզանդ» բառը: Մեր հիշած № 3079 ձեռագրում, որ մեծ տարբերութիւններ է տալիս մինչև այժմ հայտնի Փաւստոսի բնագրի համեմատութեամբ, սկսվում է այսպես. «Բուզանդարան պատմութիւնք նախագիտելի է» առանց «խոստարանութիւն» բառի. այս նախաբանի վերնագրից հետո գալիս է ցանկը և ապա «Բուզանդարան պատմութիւնք, երրորդ դպրութիւն»:

«Ի սկիզբն» բառը ջնջված: Ինչպես տեսնում ենք, թե նախաբանի և թե առաջին մասի վերնագիրները չունեն «Բուզանդ» բառը ևս:

Ավելի հետաքրքրական ընթերցվածք ենք գտնում երկրորդ մասի սկզբում, որ անմիջապես հանդիպում է առաջին մասի (3-րդ դպրութիւն) վերջաբանին. «Երրորդ դպրութիւն Բուզանդեայ չորրորդ խոստարանութիւն» և ապա այնպես, որպես բնագրում: Սրանից պարզ երևում է, որ Բուզանդի չորրորդ դպրութիւնը նույնպես համարվում է երրորդ դպրութիւն, իսկ քուն 4-րդ դպրութիւն համարվածը կոչվում է՝ «4-րդ խոստարանութիւն»:

Մենք այս կհամարենք սխալ գրչութիւն կամ թյուրիմացութիւն, եթե Բուզանդի 6-րդ դպրութիւն համարվածը չկոչվեր «6-րդ խոստարանութիւն» առանց «դպրութիւն» բառի: Միայն 5-րդ դպրութիւն համարվածը ունի «դպրութիւն 5-րդ» վերնագիրը, սակայն առանց «Բուզանդարան պատմութիւնք» ընդհանուր վերնագրի: Այս ամենը ցույց են տալիս, որ նախապես 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերը չեն կոչվել դպրութիւններ, այլ կոչվել են «խոստարանութիւն», իսկ ամբողջ Բուզանդը կոչվել է «3-րդ դպրութիւն», հավանորեն, ինչպես ենթադրում է Նորայր Բյուզանդացին, մի «Բուզանդարան» կոչվող ժողովածուի 3-րդ գիրքը, որից էլ հնարվել է «Բուզանդ» անունը դեռ Ղաղար Փարպեցու ժամանակ: Գուցե սրան հիմք կարող է ծառայել նաև այն հանգամանքը, որ մեր ձեռագիրներից մի ուրիշ «Բուզանդարան» բառի դիմաց ունի «Բուզանդակամ» բառը: Եվ որ այդ անունը հնարովի է, երևում է նաև Փարպեցու խոսքերից, որ նա բերում է որպես բանավոր խոսք՝ ուրիշներից լսած

լինելով. քանի որ, ինչպես վերևում հիշատակեցինք, սկիզբը չունի հեղինակի անուն, միայն հաջորդ մասերը ունեն «Բուզանդ» անունը միշտ «Բուզանդեայ» սեռականի ձևով, որ անկասկածորեն կամ ավանդաբար է մտցված, թեկուզ Փարպեցու հիշատակության հիման վրա, կամ հանված է «Բուզանդարան» կամ «Բուզանդական» բառերից, որը, ինչպես ճիշտ մեկնաբանում է հանդուցյալ ակադեմիկոսը, նշանակում է պատմություն, որովհետև գիրքը «Բուզանդարան» բառի հետ միշտ հիշատակում է պատմություն կամ պատմությունք բառը: Եթե ընդունենք, որ բառի ծագումը այդ չէ, համենայն դեպս այդ երկու բառերի միշտ իրար հետ գործածությունը թույլ է տալիս կարծելու, որ դրանք հոմանիշ բառեր են, կամ մի ընդհանուր վերնագիր է, եթե ճշտվի, որ ուղիղը ոչ թե «Բուզանդարան» բառն է, այլ «Բուզանդական»:

Եթե պատմություն գրքի վրա լինել «Փառատոս» կամ «Բուզանդացի» բառերը, որ երբեք չի պատահում, ապա Փարպեցին, որ անցել է՝ «Ընդ բազում ճառս մատենից առաջնոցն պատմադրացն Հայոց», չէր ասի. «Որում երկրորդ գրոցն անուանեն զոմն պատմագիր՝ կոչեցեալ Փառատոս Բուզանդացի»:

Նրա ձեռքի տակ եղել է «Բուզանդարան պատմությունք»՝ ընտանիքներն նա հետաքրքրվել է, թե ով է արդյոք գրքի հեղինակը, ելլելով այդ մասին՝ ավել է յուր մեկնությունը «Փառատոս Բուզանդացի» հեղինակ լինելու խնդրի վերաբերյալ: Պնդում ենք, որ Փարպեցու ժամանակ գրքի վրա հեղինակի անուն չի եղել, և որ «Բուզանդարան» բառը ոչ մի կապ չունի՝ Բիւզանդիոս, Բիւզանդիա կամ Բիւզաս անունների հետ, որովհետև ոչ մի ձևագրում չենք պատահում «Բիւզ» ձևին, այլ միշտ «Բուզ»: Մենք այստեղ կարող ենք համարձակորեն ասել (առայտմ առանց վրավոր հաստատություն), որ թե հիշյալ վերնագիրները, թե առաջին մասի նախաբանը և դուցե նաև ցանկերը հետագայում են կազմված և կապ չունեն ընագրի հետ:

Շարունակելով մեր խոսքը, ասենք, որ Ստ. Մալխասյանցը ժխտում է նաև Բուզանդի հույն լինելը ու այն պնդումը, թե Բուզանդի գիրքը գրվել է 4-րդ դարում, որով և նրա հակառակորդները ջանում են ապացուցել իրենց դրույթները: Այստեղ էլ Մալխասյանցը ամենայն իրավունքով, փաստարկումներով և ժեղ տրամաբանությամբ, համոզիչ տվյալներով հաստատում է, որ Փառատոսի գիրքը գրվել է 5-րդ դարում, և որ նրա ընագիրը

հայերեն է: Հիշյալ բոլոր փաստաբեկումները նա հիմնավորում է պատմական օղյալներով, զուգադրություններով, լեզվական օրինակներով, որոնք կասկածի տեղ չեն թողնում, և որոնք, ի պատիվ հեղինակի, հետադայի բոլոր բանասերները, ներառյալ Արեղյան, Հեռ, համարում են միակ ընդունելի և ճիշտը, չհաշվելով Փավստոսի առաջին երկու զարությունների հարցը, որը Արեղյանը յուր «Հայոց հին գրականության պատմություն» գրքի առաջին հատորի երրորդ հավելվածում (էջ 588) աշխատում է կասկածի տակ առնել և աղապուցել, որ Փավստոսի գիրքը նախապես ունեցել է նաև 1-ին և 2-րդ զարությունները ևս, որոնք կորել են, և որ Մալխասյանցի այն պնդումը, թե Փարպեցին ըստ գրելոցն ի պատմութեան երկրորդումն ի մտինն հնգետասներորդի» ակնարկում է Բուզանդի 4-րդ զարությունը՝ չպետք է ճիշտ համարել, քանի որ այդ խոսքը կարող է վերաբերել ոչ թե 4-րդ զարությանը, այլ ամբողջ Բուզանդի պատմությանը:

Այստեղ անկասկածորեն Արեղյանը սխալվում է, և որ Մալխասյանցի ենթադրությունը միանգամայն ճիշտ է, որովհետև իբրք որ ներսեսի անեծքը, որ Փարպեցին քաղում է, այժմ էլ գտնվում է 4-րդ զարության 15-րդ գլխում, և որ Փարպեցու ժամանակ մեր վերևում հիշատակված վերնագիրները չեն հղել, և եթե հղել են էլ, նրանք հետադայում փոխվել են կամ խառնվել նոր վերնագիրների, և հավանորեն, ըստ Փարպեցու տվյալի, Բուզանդի գիրքը ունեցել է՝ առաջին պատմութիւն, երկրորդ պատմութիւն, երրորդ պատմութիւն, չորրորդ պատմութիւն վերնագիրները. այդ է ասում ընդհանուր «պատմութիւնք» վերնագիրը, և այդ է ասում № 3079 ձեռագրի «խոստաբանութիւն պատմութեան կանոնք ժամանակագիր մատենից», որ արված է որպես 6-րդ զարության վերնագիր, և որ տպագրությունը չունի: Իսկ «խոստաբանութիւն պատմութեանց» և «կանոնք ժամանակագիր մատենից» ունեն միևնույն նշանակությունը, որ է պարզապես՝ պատմություն:

Արեղյանի հիշյալ կարծիքը միայն մի փաստաբեկումով, այն, որ Փարպեցին Բուզանդի գրվածքը չի կոչում «երկրորդ պատմութիւն» Ալաթանգեղոսի պատմությունից հետո, այլ՝ երկրորդ գիրք, ժխտվում է Բուզանդի ներկա աշխարհաբար թարգմանության առաջաբանի 26-րդ էջում:

Անցնելով թարգմանության մի շարք հարցերին՝ պետք է

ասենք, որ ներկա աշխարհաբար թարգմանությունը կատարված է այնպիսի մի մարդու ձեռքով, որ 52 տարի առաջ հմուտ կերպով քննել է և լուծել Բուզանդի Հայոց պատմության վերաբերյալ մի շարք ժիճելի հարցեր: Ոչ միայն Բուզանդի, այլև Խորենացու, Սեբեոսի, Ասողիկի և ուրիշ շատ պատմիչների ու գրողների վերաբերյալ Մալխասյանցի ուսումնասիրությունները թանկագին ավանդ են մեր հին գրականության, բանասիրության, մեր անցյալի կուլտուրայի պատմության համար, և դեռ երկար ժամանակ նրանք կպահեն իրենց գրականագիտական ու բանասիրական արժեքը՝ որպես փաստարկումներով հարուստ, հմտորեն կատարված ուսումնասիրություններ:

Ահա հանգուցյալ գիտնականը իր տպագրված գրքերին ավելացնում է նաև այս հմտորեն կատարված թարգմանությունը, որը լույս է տեսնում, ցավոք, ետ-մահու թարգմանչի հրատարակությամբ, առաջաբանով, ծանոթություններով հանդերձ, որ վաղուց սպասելի էր և շատ անհրաժեշտ ի միտ առյալ այն հետաքրքրությունը, որ կա Բուզանդի գրքի նկատմամբ մեր հին գրականության պատմությամբ հետաքրքրվողների մեջ: Այս թարգմանությունը Բուզանդի պատմության 3-րդ տպագրված թարգմանությունն է (առաջինը Ֆրանսերեն լեզվով կատարել է Էմիլը 1867 թ., իսկ երկրորդը՝ գերմաներեն կատարել է Լաուերը 1879 թ. (տես ներկա թարգմանության առաջաբանը, էջ 76—77), որ ավելի հաջող է և կատարյալ, քան մյուս թարգմանությունները:

Որոնք են այս թարգմանության առավելությունները. առաջին առավելությունը պետք է համարել այն մի շարք ուղղումները, որոնք կատարվել են թե՛ թարգմանչի կողմից և թե՛ ուրիշների և որ առաջ է բերված ուղղված թարգմանությունը: Այսպես օրինակ՝ բնագրի «Երամայեաց ի դահեկ միոջե ի ծով անդր հոսել» ուղղել է՝ «ի գահեկ միոջե», որ պետք է ուղիղ համարել նախ իմաստի և հետո քերականական կողմից՝ համեմատած բնագրում եղածի հետ: Այդպիսի դիպուկ և արդեն բոլորովին անկասկածելի սրբագրություն է 3-րդ դպրության ԺԱ գլխի՝ «ի վերայ բանակի տեառն աշխարհիս» արտահայտության «բանակի» բառը, որ տնայայտան պետք է լինի «բնակի», որպես և սրբագրված է: Բնագրում գրված է (տես 4-րդ դպր. Դ գլուխ), «խոնարհել ամենացուն միով միաբանութեամբ զնա ընտրել...» «խոնարհել» բառը անշուշտ եղել է «խորհել», ինչպես և ուղղված

է թարգմանութեան մեջ: 4-րդ դարութեան Ը գլխի «ուստի կար-
ծիցես բանիցն պատասխանիս պատրաստել» ուղղված է. «Ուստի
կարիցէ...»: Մեր հիշած № 3079 ձեռագիրը ունի «կարծիցէ»,
իսկ «կարծիցես» ձեռ «կարիցէ» ուղղել է «Արմատականի» հոգա-
կավոր հեղինակը դեռ 1905 թ., բայց այդ սրբագրութեանը Մալ-
խասյանցը ծանոթ չի եղել: Սրա նման և ուրիշ ուղղումներ, որոնք
թարգմանիչը հաշվում է մինչև 39-ը, որոնց մասին դեռևս խոսք
կլինի:

Երկրորդ առավելութիւնը այս թարգմանութեան՝ համեմա-
տած Խորենացու թարգմանութեան հետ, աշխույժ ժողովրդական
աշխարհաբարն է, որ թարգմանիչը պտտաճել է քնազրի լեզվին,
որ, ինչպես գիտենք, հետու է մեր պատմադրութեան տեղեկմիջ-
մից, պատմողական ոճի պրիոմներից. բնդհառակն՝ այստեղ
խոսքի հիմնական որակը մեծ մասամբ երկախոսութիւններ են,
գլխումները, աշխույժ գրույցներն ու հարցադրումները, որոնք
խիստ բնական են և կենդանի, և որոնք շատ հաճախ թարգմա-
նիչը հաջող աշխարհաբարի է վերածել:

Երրորդ առավելութիւնն այն է, որ, կրկին համեմատած
Խորենացու թարգմանութեան հետ, ինկատի առնելով նաև թարգ-
մանչի տեսողութեան թուլացումը, բացթողումներ համարյա
թե չկան (մեր խոսքը գիտումնավոր բացթողումների մասին չէ):

Չորրորդ առավելութիւնը, չնայած այն բանին, որ չկա
Բուզանդի քննական հրատարակութիւնը, իսկ մեր ձեռքում
եղած բնագիրը խիստ աղավաղված է, ու շատ արտահայտու-
թիւններ անհասկանալի, այնուամենայնիվ թարգմանիչը պատ-
վով է դուրս եկել նույնիսկ դժվարամատչելի հատվածների
թարգմանութեամբ:

Մյուս կարևոր երևույթը, որ ես ուզում եմ անպայման
նշել, գրքի խիստ մատչելի և պարզեցրած առաջաբանն է, որ-
տեղ թարգմանիչը սեղմ տողերի մեջ բերել է Բուզանդի մասին
եղած համարյա բոլոր թեր և դեմ կարծիքները և այնքան պարզ
է շարադրել, քննել, մերժել կամ ընդունել, որ ամեն գրադես
մարդ կարող է կարդալ և Բուզանդի մասին լրիվ գաղափար
կազմել՝ առանց դիմելու այդ հոգվածների ու գրքերի բնագրե-
րին: Գրքի ապագրութիւնը համարյա մաքուր է, եթե չհաշ-
վենք մի քանի աննշան վրիպումներն ու տեխնիկական թերա-
ցումները, որոնք տեխնոստիկի էին, մանավանդ որ թարգմա-
նիչը ապագրութեան ժամանակ մահացած էր. այդպիսի սխալնե-

րից կարելի է հիշել, օրինակ, 105 էջում տպւած Դարանգադի, փոխանակ՝ Դարանադի»։ 155-րդ ծանոթագրությունը աղճատվել է ամբողջ մի տող ընկնելու պատճառով. 185-րդ ծանոթության մեջ ցույց է տրված 109-րդ ծանոթությունը, պիտի լինի 118-րդ։ 39 ծանոթությունը, ունի՝ բնագրում, պիտի լինի՝ բնագրում. 167 ծանոթությունը՝ քարգմանեղիմի։ 194-րդ ծանոթությունը ունի շեղ երես այդ, որ բնագրում չկա և անհասկանալի է։ Այդպես խառնվել է 243 էջի մի մեծ պարբերությամբ և նման թերագումներ, որոնք սակայն վերադասվել են ցանկում չկան։

Նման հրատարակությունից մենք խիստ պահանջներ չենք անում, մտնաովանդ որ թարգմանիչը հայտնի պատճառներով հետաքննություն չի ունեցել օգտագործել ձեռագիր վավերագրներ, այլևայլ աշխատություններ ու բնագրական սրբագրություններ. որոնցից ամենամեծը և ամենից կատարյալը, սրբագրությամբ հիշատակում ենք, մեր ուսուցիչ Հրաչյա Աճառյանի սրբագրություններն են, որոնք մի ամբողջ հոգվածաշարով լույս են տեսել «Բանասերի» 1905—1906 թ. թ. համարներում և որոնք մենք մանրամասն ուսումնասիրել և բաղդատել ենք Բուդանդի № 3079 ձեռագրի հետ և նկատել, որ մեծ մասամբ այդ սրբագրությունները համապատասխանում են ձեռագրի տվյալներին, բայց որոնք, խիստ ցավելով արձանագրում ենք, չեն մտել մալթասոյանցի թարգմանության մեջ։

Հիշենք դրանցից մի քանի կարեւորները, որոնք համընկնում են ձեռագրի տվյալներին՝ բաց թողնելով այնպիսիները, որոնք չնայած ձեռագրով չեն հաստատվում, բայց թե՛ քերականորեն և թե՛ իմաստով շատ ուղիղ են և մեր կողմից ընդունելի։

Այսպես օրինակ՝ 3-րդ գլխի 6-րդ գլխի (Վենետիկի հրատարակություն, 1889 թ.) 15 էջում ունենք. «Եւ արձակեցին ընդ ծովեզեր դաշտին», որ իհարկե ճիշտ չէ. Աճառյանը ուղղել է ընդգծված բառը «ծովեզեր». ձեռագիրը ունի «ծովեզերս», որ քերականորեն համապատասխանում է Աճառյանի սրբագրածին։ Այդ նույն էջում է գլխի վերնագիրը ունի. «Յաղազս մեծի պատեհազմին հինին եկելաց յարշաւանաց արքային...». «եկելաց» հոգնակի ձևը ուղղված է «եկելոյ», որ համապատասխանում է ձեռագրին, միայն լավ կլինի «յարշաւանաց» բացառական ձևը վերածվել «սեւաշաւանի» «արշաւանաց», և այն իմաստակ բնագիրը կուղղվել քերականորեն և կտա ձեռագրի ընթերցվածը ու կզուտապես հասկանալի։ 2-րդ գլխի 5-րդ գլխի (էջ 165)

ունի. «Թեպէտ իցե թագաւորին Արշակայ կոռել...». Աճառյանը ուղղել է. «Թէ պէտ իցէ», որ իմաստով ճիշտ է. տպագրի տվյալը անիմաստ է, իսկ ձեռագիրը ունի. «Թե սլարտ իցե», որ իմաստով համընկնում է սրբագրվածին: Էջ 169-ում ունենք «Բայց բանքն (ձեռագրում՝ բանք) Մարեայ «երիցոյ ուշ եղեն ինձ». ըստ Աճառյանի ուղղված է. «Բայց բանքն Մարեայ երիցոյ ուշ եղեն ինձ», որ ճշտորեն համապատասխանում է № 3079 ձեռագրին: Եվ այսպես, բազմաթիվ քերականական, բառական, իմաստային սխալներ սրբագրվել են շատ խնամքով և որոնք պետք էր տնայայման հաշվի առնել:

Հենց այստեղից էլ մենք սկսում ենք մեր դիտողությունները ներկա թարգմանության վերաբերյալ. եթե այս դիտողությունների դեթ մի տասներորդ մասն էլ ուղիղ լինի և նպաստի Բազանդի բնագրի վերականգնմանը և ուղիղ թարգմանությանը, կնպաստի նաև պատվարժան գիտնականի հիշատակի պայծառացմանը, որ այնքան գուրգուրանքով ավելի քան 70 տարի դրադից հայ լեզվաբանության և գրականության մշակությամբ իսկ եթե այստեղ սխալներ էլ լինեն, դրանք առիթ կտան առավել կարող մեկին նոր ուղղումներ մտցնելու մեր 5-րդ դարի այս հոյակապ հիշատակաբանի մեջ, որ այնքան ազավաղված է մեզ հասել:

Մեր դիտողությունները մենք անում ենք մի քանի ստորաբաժանումներով:

Սկսում ենք մեր կողմից ենթադրված սխալ թարգմանություններով. առաջին օրինակը, որ մենք բերում ենք, հետաքրքրական է այն առումով, որ մեր երկու պատկանելի ուսուցիչներին թյուրիմացության մեջ է գցել: 4-րդ դարության ԺԸ գլխում (էջ 128) հիշվում է այն գեպքը, թե ինչպես, երբ Արշակը մտնում է պարսից թագավորի ախոռ՝ ձիերը դիտելու, ախոռապետը, տեսնելով Հայոց թագավորին, «ոչ ինչ առ լուս կալեալ մեծարեաց». Մալխասյանցը այս նախադասությունը թարգմանել է շատ ազատ. «Երբ նա թագավորին տեսավ, իսկի ուշադրություն չդարձրեց, ոչ մի մեծարանք ու պատիվ չույց չտվեց» (Թարգմանություն, էջ 183), Աճառյանը համարել է աղավաղված և ուղղել է. «ոչ ինչ առ լուս կալեալ»: Բայց այս մի շատ սովորական գրաբարյան նախադասություն է, որ նշանակում է՝ «վի տեղ էլ չդրեց կամ՝ լվի տեղ դնելով՝ չմեծարեց»: Թյուրիմացության պատճառը չլու բառի հոգնակի ձևն է, բայց

այդ գրաբարյան դարձվածքի «ունել» բայի «առ» նախդիրով խնդիրը միշտ էլ հոգնակի է գրվում, երբ «ունել» նշանակում է՝ «համարել»։ Օրինակ՝ Եզնիկը գրում է. «Մարդիկ աշխարհիս զնա (ի նկատի առ որ «զնա» եղակի է) առ աստուածս ունին»։ «Զկուսս ոչ կարայ երբեք առ աստուածս» (Աղաթանգեղոս՝ § 110). երկու դեպքում էլ «աստուած» բառը հոգնակի է, չնայած իմաստով եղակի է պահանջվում։ (Տես մեր «Գրաբարի հատընտիր», էջ 80, ծանոթ. 40)։

Երկրորդ փաստը՝ առաջինին հարևանան. չորրորդ դարու թյան իթ՝ գլխի վերնագիրը սկսվում է. «Յաղագս Դմառունդ Վսեմականայ, որ իննսուն՝ քիւրուն տապրիկ զօրօքն...» մեզ հետաքրքրողը «տապրիկ» բառն է, որը նույն ձևով գտնվում է նաև մեր ձեռագիրներում։ Մենք ենթադրեցինք, որ այդ բառը առաջացել է զբաղվողության (ինչպես՝ խստոր աղել է՝ սխտոր, կապերտ աղել է՝ կարպետ) «պատրիկ» բառից, մասնավորապես որ նույն ձևով մեզ պատահեց հենց նույն № 3079 ձեռագրում (էջ 336)՝ «վասակ» բառը գրված «վակա» ձևով։ Հետո ստուգեցինք մյուս բոլոր ձեռագիրները և վերջապես հիշյալ ձեռագրի ցանկում գտանք «տապրիկ» բառի զիմաց գրված՝ «պատրիկ», որ Աճառյանը ենթադրաբար համարում է հատուկ անուն, իսկ Մալխասյանցը դարձրել է «Տապարիստան», որ «պարսկական նահանգ էր նախկին Մարաստանում»։ Եւս թարգմանության ծանոթություն՝ 131։ Առանց կասկածելու «տապրիկ» բառը պետք է դուրս հանել Արմատականից։

5. րդ դարու թյան իթ՝ գլխի (էջ 262) «զի Վաչէ երկրորդն Մանուելի, ձին զուլամբ երթեալ, սպանանէր» նախադասությունը թարգմանված է. «որովհետեւ Վաչին ձին՝ քթահարելով՝ նրան (վեր էր ձգում) սպանում էր» (էջ 290)։ Պետք է թարգմանել՝ «որովհետեւ Վաչին՝ Մանուելի երկրորդը սպանվեց՝ ձին վզի վրա գլորվելով կամ գլխովայր գալով»։ Եթե բնագիրը չենք ուղղում. «Զվաչէ՝ զերկրորդն Մանուելի՝ ձին զուլամբ երթեալ սպանանէր», որ կթարգմանվի՝ ձին գլխի՝ աղելի ճիշտ՝ վզի վրա ընկնելով սպանեց Վաչին՝ Մանուելի երկրորդին։

«Ասել» բայից հետո հաճախ «առ» նախդիրով հայցական է գրվում, որ նշանակում է՝ մասին, վերաբերյալ. այսպես հենց նույն էջում (էջ 34) Բուղանդը գրում է. «Թեւեւս և առ այս ազգ միտէր բանն մարգարէական», որ թարգմանված է ուղիղ, բայց հենց նույն տեղում գրված նույն տիպի նախադասությունը՝

«և ըստ մարգարէական բանին առ նոսա ասելոյ» պետք է թարգմանել՝ «նրանց մասին կամ նրանց վերաբերյալ ասված մարգարեական խոսքի համաձայն» և ոչ՝ «ինչպես մարգարեական խոսքը ասել էր նրանց» (տես թարգմ. էջ 110):

Թվում է, թե պետք է ուղղել Յորդգյուրության Թ գլխի (էջ 21) «որ էր մի ի չորից գահերէց բարձրէց տաճարին արքունի» նախադասությունը, որ թարգմանված է՝ «որ արքունական սեղանի չորս բարձրագույն գահերից մեկն էր գրավում» (տես էջ 99): Նախ՝ պետք է «տաճար» բառը այստեղ հասկանալ՝ տուն, սենյակ, դահլիճ և ոչ՝ սեղան. երկրորդ՝ «գահերէց, բարձրէց» միևնույն նշանակությունն ունեն և չեն նշանակում գառ կամ բարձ, որ նույնանիշ բառեր են, այլ գահը կամ բարձը գրավող մարդ: Արքունիքում ըստ գահնամակի նստում էին ոչ միայն սեղանի շուրջ, այլ ամեն դեպքում, երբ հարկավոր էր լինում հավաքվել թագավորի մոտ խորհրդակցության կամ այլ հարցերով:

Յորդգյուրության ԺԴ գլխի (էջ 36) ունի՝ «և ունէր սա դաստիճան աթոռոյն գլխաւորութեան ի մայր եկեղեցեացն ամենայն Հայաստանեաց». այս նախադասության մեջ տեղի է ունեցել շրջում և դարձել է ոչ լավ հասկանալի, բայց ուշադիր ընթերցողը կնկատի, որ «գառաջին» բառը վերաբերում է «գառառնա» բառին, իսկ «ի մեծն, նախ» բառերը «եկեղեցի» բառին, որ դրված է ներգոյական հոլովով. պետք է թարգմանել. «Սա ունի Տարոնի գլխավոր աթոռի առաջին աստիճանը ամբողջ Հայաստանի (ընագրում՝ Հայաստանեաց, գուցե Հայաստանեայց = թե՛ Հայաստանի և թե՛ հայաստանցիներ) մայր եկեղեցիներից մեծ և գլխավոր եկեղեցում»։ Թարգմանված է. «և Տարոնի մեծ և առաջին եկեղեցու բոլոր Հայաստանի մայր եկեղեցու աթոռի գլխավոր աստիճանն ունի» (էջ 112):

Կարծում ենք, որ նույն տեղում ընդված՝ «որպես ի դարանաղեաց գաւառին յեկեղեցին Թորգանու պատուին վասն գերեզմանացն հայրապետին Դրիգորի», որտեղ «տեղիք» բառը պետք է համարել զեղչված և թարգմանել՝ եկեղեցուն կից կամ մոտիկ տեղերը պատվում են, և ոչ՝ եկեղեցին, որը թե՛ քերականորեն և թե՛ իմաստով անհարկ է. նախ՝ քերականորեն «յեկեղեցին» ուղղական չէ. երկրորդ՝ եզակի է, իսկ բայը հոգնակի և երրորդ՝ պետք չկար ասելու, թե եկեղեցին հարգվում է. և վերջապես մի քանի տող վերևում խոսվում է այդպիսի այլ տեղերի մասին: Այդպես է նաև նույն դպրության ԺԹ գլխի՝ «և էին նոքա յերկ-

քին Տարօնոյ յեկեղեցւոյ յաւանին յԱշտիշատ» նախադասութեանը, որ պետք է թարգմանել՝ «նրանք գտնվում էին Տարոն երկրում», եկեղեցու ավան Աշտիշատում» և ոչ ըստ տպագրված թարգմանութեան. «նրանք (մի անգամ) Տարոնի երկրումն էին Աշտիշատ ավանի եկեղեցւում»։ Նախ՝ փակադժուած գրված «մի անգամ» բառերը ավելորդ են. երկրորդ՝ նրանք եկեղեցւում չեն. «եկեղեցի» բառը ոչ թե գրված է ներգոյական հոլովով, այլ սեռական, իսկ շարունակութեան մեջ էլ գրված է. «Յայնգեւդ երկրքեան եղբարքն երթեալք հասանէին»։

5-րդ դպրութեան Ե գլխի հայտնի «Առ Արշակ քաջ» արտահայտութեանը, որ թարգմանված է՝ «քաջ Արշակի համար», կարծում ենք պետք է թարգմանել ուղղակի այսպէս՝ «առ, քաջ Արշակ», այսինքն՝ «առ» պետք է հասկանալ ոչ թե նախդիր, այլ «առնում» բայի հրամայականը։ Այս թեկուզ երևում է այն քանից, որ երբ Շապուհը հասնում է Պարսկաստան, մի այսպիսի արտահայտութեան է անում. «Եւ յորժամ պախոյեանսն ընկեանուն, համակ ասէին թէ՝ «Առ, Արշակ, և նա չէր ի միջի նոցա» (կետադրութեանը մեին է—Վ.Ա.)։ Այստեղ թարգմանիչը հետեւել է Ասուերին, իսկ Ասուերն էլ էմինին։ «Առ» նախդիրը հայցական հոլովով այսպիսի գործածութեան չունի. սակաւ պատահում է անորոշ դերբայի հետ և այն էլ մեծ մասամբ «ի» նախդիրի հետ միասին։

Պարզ չէ թարգմանված չորրորդ դպրութեան ԾԴ գլխի (էջ 171) «...եւ զկէսն ի նոյն հողն գիւրոյ բնակութեան երկրին թողուր»։ Թարգմանված է. «Իսկ մյուս կեսը թողնել բնական հողով»։ Այսինչ հարկավոր էր թարգմանել՝ «Իսկ կեսը թողնել յուր բնիկ երկրի նույն հողը»։ Նույն տեղում (էջ 172) ունենք այսպիսի մի նախադասութեան. «Իսկ ի վերայ բուն գետնոյն յատակին՝ և կայր, ի զղջումն դառնայր»։ Այս նախադասութեան «և կայր» մասը ուղղված է՝ «և լայր», կարծում ենք անտեղի է. քանի որ նախադասութեան իմաստը պարզ է, իսկ քերականորեն միանգամայն ուղիղ կառուցված։ Նախադասութեանը պիտի կետադրել այսպէս. «Ի վերայ բուն գետնոյն յատակին և կայր, ի զղջումն դառնայր», իսկ «և» շաղկապն էլ հասկանալ՝ «հետց որ»։ Այն ժամանակ նախադասութեանը պարզ կլինի. «հետց որ կանգնում էր բուն հատակի գետնի վրա, զղջում էր»։ Այստեղ կարող է առարկութեան լինել «և» շաղկապի «հետց որ» նշանակութեան դեմ, սակայն «և»-ը գրաբարում տաս-

նյակ առումներ ունի, որ ղժբախտաբար «Հայկադյանը» չի բերում, այսպես՝ ունենք «բայց» նշանակությամբ. կամեցայ սիրել զԱրշակ Արքայ Հայոց, և նա համակ անարգեաց զիս Շուշի (4-րդ, ԾԴ): «Հայեցայ, և ոչ ոք էր. հայեցաւ և ոչ գոյր մարդ» (Յօսայի, ԾԹ, 16): Իսկ մեր քերած նշանակության համար համեմատիր Բաղանդի հետևյալ նախադասությունը. «Յւ զայս ասացեալ՝ անդէն բժշկեցաւ» (Յ-րդ, Թ) (հենց որ այս ասաց, անմիջապէս բժշկվեց): Նման մի նախադասություն ոչ թե ուղղված է, այլ դուրս է նետված որպէս անհասկանալի. այդ դուրս նետված նախադասությունից երկու տող առաջ (4-րդ, 2, էջ 94) գտնվող՝ «Իսկ մեզ կարևորքն առանց ուրոյն ի մարդկան ազանդէն չիք հնար լինել» թարգմանված է. «Ինչ որ մեզ կարևոր է՝ առանց մարդկանց օգնության էլ կարող է ստացվել», որ բոլորովին հակասում է նախադասության իմաստին: Եթե «Աղանդ» բառը ճիշտ է հասել մեզ (խոսքը այստեղի մասին է), ապա այդ պետք է ըստ իմաստի նշանակի «հասարակություն», իսկ «առանց» և «ուրոյն» բառերը հոմանիշ բառեր են միևնույն «առանց» նշանակությամբ. ուստի պետք է նախադասությունը թարգմանել «Իսկ մեզ համար կարևոր բաները չեն կարող լինել առանց մարդկանց հասարակության (ազանդի)»։ Իմաստն էլ հենց այդ է պահանջում, որովհետև շարունակության մեջ՝ «Իսկ տէքն կարող է և առանց կեթակրոյ պահել զմեզ» նախադասությունը այդ է ասում:

Այժմ դառնանք բաց թողած նախադասությանը. «տալ մեզ զսովորակոն ընդունելութիւն բնութեան մահուն, որ չերթայ ուրեք ի մարդկանէ, այլ պատճառս միայն առնէ գանուկ իւր ի վերայ օմերևոյք մարմնոյն»։ չի թարգմանված վերջին ընդգծված մասը, որ նշանակում է՝ «յուր անունը միայն պատճառ է դարձնում աներևույթ մարմնի վրա»:

4-րդ դպրության Բ գլխի վերնագիրը՝ «Յաղագս շինութեան կարգաց յօրինելոց աշխարհին» արտահայտությունը բոլորովին էլ քաղաքացիական շինարարությանը չի վերաբերում, այլ վարչական, քաղաքական կարգերին, ուստի չպետք է թարգմանվեր՝ «Հայոց աշխարհի շինանալն ու բարեկարգվելը», այլ «Հայաստանի վարչական կարգերի կազմավորման (ավելի ճիշտ վերակազմակերպման) մասին», որովհետև, եթե ի նկատի չունենանք բնագրի բառերն անգամ, որ ճիշտ ու ճիշտ մեր բերած նշանակությունն են տալիս, այնուամենայնիվ այդ գլխի

գովանդակությունը վերաբերում է միայն և միայն վարչաձևի կազմակերպմանը:

4-րդ դպրության Ը գլխի (էջ 99) «գրեաց թուղթ աղաչանաց նպիսկոպոսն Եւսերիոս առ Երիցապետն Բարսեղ և մեծաւ պաղատանօք որ ինչ վասն սլաւութիւն սլաշտամանն» թարգմանված է՝ «Եւսերիոս նպիսկոպոսը աղաչանքի թուղթ գրեց Բարսեղ Երիցապետին, որի մեջ արժանավայել պատմով ու մեծ պաղատանքով խնդրում էր»: «Վասն պատուին սլաշտամանն վերաբերում է ոչ թե նպիսկոպոսին, այլ այն բանին, որին վերաբերում է հարցը: Այստեղ՝ «պաշտօն» (սեռ. պաշտաման) նշանակում է՝ կրօն, աստվածպաշտություն. ուստի՝ «որ ինչ վասն պատուին սլաշտամանն» նշանակում է՝ ինչ որ վերաբերում է կրօնի պատվին, կրօնի պատվի համար է:

Մեկ թվում է ուղիղ չի թարգմանված նաև նույն 4-րդ դպրության ԾԴ գլխի վերնագրի հետևյալ դարձվածքը. «Եւ Տայր զնա յԱնուշ բերդն», որ նշանակում է՝ «Ներան բանտարկեց Անուշ բերդում». այդպիսի մի դարձվածք է նաև նույն դպրության ԾԹ գլխի «չարածահ սպանանէին զառնեսեսան յամենայն ի բերդսն, յորս տաւեալ էր զնոսա անդ: Ընդգծված մասը պետք է թարգմանել, որոնց մեջ բանտարկել էին նրանք նրանց» (զրաբար եղել է այսպես. «Յորս տաւեալ էր նոցա (սեռական հոլովով կենթակա «տաւեալ էր» անցյալ դերբայի համար) զնոսա անդ.¹ առաջին նախադասությունը թարգմանված է. «Արշակին ուղարկում է Անուշ բերդը», իսկ երկրորդն՝ «որտեղ տեղավորված էին», մանավանդ վերջինը բոլորովին չի համապատասխանում բնագրին:

«Տալ ի բանտ» կամ «տալ ի բերդ» հատուկ մի գրաբարյան դարձվածք է, որ նշանակում է՝ բանտարկել: Բացի հիշյալ օրինակներից ի նկատի առ նաև՝ «տուք զգա ի տուն բանտին» (Բ Մնացորդաց, ԺԸ, 26), «ետուն զնա ի տուն բանտի» (Երեմ. ԼԵ, 14), «զի ես էի որ ի բանտն տայի» (Դործք, ԻԲ, 19):

Նույն տեղում «կայր կախեալ յերեւոյթ տեսիլ նշանակի» պետք է մեր կարծիքով թարգմանել՝ «կախված էր որպես մի հրաշալի տեսարան»: Նորայրը կասկածով առաջարկում է «նշանակ» բառը փոխել՝ «նշաւակի» (տես Կորինս Վարդապետ և նորին թարգմանութիւնք, էջ 263), բայց կարծում ենք՝ պետք

¹ Տես մեր «Գրաբարի հատընտիր», էջ 27, ծանոթ. 9:

չկա. այստեղ՝ «տեսիլ» և «նշանակ» բառերը միևնույն իմաստը ունեն, որ նշանակում են՝ տեսարան: Մնում է այստեղ «երևոյթ» բառը, որ մենք թարգմանում ենք «հրաշալի»: Համեմատիք նույն Բուդանդի «Յաճախեաց զերևոյթ նշանս իւր և զսքանչելիս» (4-րդ, ԺԳ), որ նշանակում է. «շատացրեց իւր հրաշալի հրաշքներն ու սքանչելիքները»: Որ «երևոյթ» բառը այստեղ ածական է և ոչ գոյական, երևում է այն բանից, որ եզակի է դրված. բայց չի նշանակում «երևացող», ինչպես թարգմանված է՝ նա հաճախեց իր երևացող նշանն ու սքանչելիքները:

Թվում է, ոչ ճիշտ թարգմանություն է նաև 4-րդ դպրության ԾԴ գլխի (էջ 170) «ապա թաղաւորն Պարսից տաճիկ ուղտուք արձակէ ի Հայս արս զհողո և զջրոյ, զի եկեսցեն բարձցեն մման զիմայսն». պարբերություն ընդգծված մասը, որ պետք է թարգմանել՝ «որպեսզի գան լուծեն (կամ փորձեն) (բառացի՝ վերացնեն) նրա համար (Շապուհի) հմայքը, այն գուշակությունը, որ քավդեները արեցին: Իսկ՝ Մալխասյանցի թարգմանությունը (էջ 216) կարգում ենք. «որ զնան այդ հմայության նյութերը բերեն»: Շատ ցավում ենք, որ այստեղ նույնպես հանգուցյալ գիտնականը հետևել է Լաուերին՝ որը հիշյալ նախադասությունը ճիշտ այդպես է թարգմանել. *Dass sie hingingen und ihm die Zaubermittel brächten.* (Lauer, *Des Faustus von Byzanz Geschichte Armeniens*, Köln, 1879, էջ 132).

Այստեղ տեղն է հիշել նաև հետևյալ արտահայտությունը, որ ունենք նույն դպրություն ԾԾ գլխում (էջ 175). «իսկ յերկիրն Հայոց ստէպ առաքէին դեսպանս առ տիկին աշխարհին առ Փառանձեմ, զի ժառկալ լինիցի բերդին և մի ձեռս տացի ի պարսիկս». ընդգծված տողերը թարգմանված են՝ «որ դիմադրէ բերդը պաշտպանէ, պարսից ձեռքը չտա» (էջ 219). սակայն կարծում ենք ճիշտ կլիներ, եթե թարգմանվեր այսպես՝ «որպեսզի աշխուրջ (զգաստ) լինի բերդի նկատմամբ և չեամսնվի պարսիկներին» և ոչ թե բերդը չհանձնի պարսիկներին: Այստեղ ավելի մոտ է Լաուերի թարգմանությունը, որ հաշտվել (*sich abfinden*) բառով է թարգմանել: Այսպես էլ՝ «ապշեցոյց չեալիշի» թարգմանված է «խելք թողեց գլուխս, շմեցրեց», այնինչ պետք է թարգմանել. «շփոթեցրեց, չիշեցրեց». «և նա ևս չարքան դնա». թարգմանված է՝ «բայց Հոհանը ավելի խիստ ստիպեց», նույն տեղում (էջ 277). «խաղակատակ լիներ նոցա» թարգմանված է. «նրանց խեղկատակն էր դառնում». կարծում ենք

պետք է թարգմանել՝ «նրանց համար խեղդատակում էր», իսկ շարունակության մեջ «որպէս խաղալովն զանձն իւր կրթէր յազանութեան» թարգմանված է. «խաղալիկ դառնալով նա ազահության էր ձգտում»։ այնինչ «որպէս» բառը այստեղ նշանակում է՝ «օրինակ» (համեմատիր Եզնիկի հետեյալ նախադասությունը. «կարծիցի ումանց, որպէս՝ յունացն հեթանոսաց և արանցն մոգուց և հերձուածողաց»)։ պետք է թարգմանել «խաղալով (խեղդատակելով) իրեն (զանձն իւր=իրեն) վարժեցնում էր ազահության մեջ»։

Մի ազավազված նախադասություն է նաև 3-րդ դպրության Ժ. գլխի. «որում ամուսն Յակոբ Իսիսանակ ազգումն պարսիկ կռէր», որ թարգմանված է՝ «որի անունն էր Հակոբ, Զգոն կոչված, պարսիկ Անակիրորդին»։ Կարծում ենք այսպիսի ուղղումը, որ գալիս է Նոբայր Բյուզանդացուց, պետք է բռնադրոսիկ համարել առանց հիմքի՝ Նախ՝ ասենք, որ Վենետիկյան մի ձեռագիր չունի «փոխանակ ազգան պարսիկ» մասը, իսկ եթե ընդունենք, որ այդ կապակցությունը հարադատ է ընադրին, ապա այն մի միջանկյալ արտահայտություն է, որ ընկած է՝ «որում անուն Յակոբ կոչէր» բուն նախադասության մեջ. կարծում ենք այս ապացուցելու համար հարկ չկա օրինակներ բերել. փնում է «փոխանակ ազգաւ պարսիկ» դարձվածքը. «փոխանակ» բառը ես կարծում եմ պետք է հասկանալ՝ «չնայած», «հակառակ այն բանին» և թարգմանել՝ «չնայած ազգով պարսիկ էր»։ Համեմատիր սխալ կետագրության պատճառով սխալ թարգմանված նաև հետեյալ նախադասությունը. «երկու մանդունք միուսն Պապ անուն և միւսուսն Աթանազինէս, ճանաչէին ստահակը և անխրատը»։ թարգմանված է՝ «մեկի անունը Պապ միւսինը Աթանազինէս, ճանաչված էին իրրև անխրատ ստահակներ», այնինչ պետք էր «Աթանազինէս» բառից հետո ստորակետը ջնջել և դնել «ճանաչէին» բայից հետո և ապա թարգմանել։

Պատմական թյուրիմացություններ են առաջանում նաև հին տերմինների սխալ թարգմանության պատճառով. այսպես՝ «և զգաւառսն ունիւր յոստան» թարգմանված է՝ «գաւառները Ոստանին միացրեց», և «ոստան» բառն էլ գրված է մեծատառով, որը անհասկանալի է։ 118-րդ ծանոթության մեջ «ոստան» բառը բացատրված է՝ կալվածք, քաղաք և հետո՝ որպէս Ռշտունյաց կալվածքը Վանա լճի մոտ։ Բայց ես կարծում եմ՝ պետք է ընդունել «ոստան» բառի Ադոնցի մեկնաբանությունը, ըստ որի

սկզբնական նշանակութիւնն է՝ շեմ, դուռ, ապա արքունիք և հետո միայն արքունի կալվածք: Բուզանդի մեր բերած նախադասութիւնը պետք է հասկանալ՝ «յարքունիս ունել», մեր այսօրվա հասկացողութեամբ՝ պետականացնել, ճիշտ երկու տող վերև (4-րդ դարութիւն, ԺԹ, էջ 133) «զբազմաց տունս հատանէր յարքունիս»: «Ոստան» բառի կալված իմաստը ունենք 5-րդ դարութեան ԺԸ գլխում, որ մնացել է անթարգմանելի: Այստեղ պետք է հիշել նաև հայտնի մի դարձվածք, որ Բուզանդը բազմաթիվ անգամ գործ է ածել: «Եւ ինքեանք կային ի հարկի ծառայութեան» (5-րդ, ԺԸ), «ի հարկի կացուցանէր» (նույն տեղ, ԺԷ, ԺԶ, ԺԵ, ԺԴ, ԺԳ, ԺԲ, Թ). որտեղ որ նախադասութիւնն է. «ի հարկի ծառայութեան», որ թարգմանված է՝ «հարկատու և հպատակ էր դարձնում», իսկ որտեղ սոսկ՝ «ի հարկի կացուցանէր», ապա թարգմանված է՝ «հարկատու էր դարձնում»։ Թե՛ «ի հարկի ծառայութեան» և թե՛ «ի հարկի կացուցանել» պետք է հասկանալ ոչ թե՛ հարկատու, հարկի ենթարկել նշանակութիւններով, այլ՝ ծառայեցնել նշանակութիւններով: Այդ արտահայտութիւնը Բուզանդը վերցրել է Մակաբայեցիների գրքից (Ա Մակ, Ը, 10), որի դիմաց հունարենը ունի *kate dou losanto* = ծառայեցնել: Համեմատիր նաև Գ Թագաւորաց, Թ, 21. «Եւ արկ գնոսս Սողոմոն ընդ հարկօք ծառայութեան մինչև ցայօր», (Երեմ, ԻԷ, 9), «ոչ հարկիցէք արքային բարեկացոց»: Եվ դրա համար մի՞թե ամենալավ օրինակ չէ նույն Երեմիայի Լ, 8-ում հետևյալ արտահայտութիւնը. «Եւ ոչ ևս կայցին նոքա ի հարկի օտարաց, այլ հարկեցին տեսուն Աստուծոյ» — բնական է որ աստծուն հարկ չպետք է տային, այլ ծառայեին: Երբեմն «հարկ» բառի դիմաց Գրքում ունենք *phoros* (տուրք), բայց Գրքի ժառանգեալները նշում են, որ յոթանասնից թարգմանութեան մեջ այդ բառը ունեն Ժանը աշխատանք նշանակութիւնը՝ համապատասխան եբրայեցերեն *mas* բառին: Այդպես է նաև «մարդահարկ» բառը, որ նշանակում է՝ բեղյառի ենթակա, բայց ոչ հարկատու. տես նաև Ղեվոնդ (Շահնաղարյանի հրատարակութիւն, էջ 161):

Եվ վերջապէս ամենալավ ապացույցը ունի Եզնիկը հետևյալ նախադասութեամբ. «Մարդն որ անասնոյն տիրէ, թի անասունն, որ մարդոյն ի հարկի կայ»։ Բնական է, որ անասունը մարդուն չի կարող տուրք տալ:

Լեզվական առումով սխալ է թարգմանված նաև 3-րդ

գաղության և գլխի՝ «այլ հայրական միտս զժերական հանճարոյն ստացեալ զխրատն իմաստութեան»։ Կետք է թարգմանել՝ «այլ հայրական միտք ծերունական հանճարի անմահ իմաստուն խրատն ստանալով, բայց կարգում ենք՝ «այլ հայրական միտք ծերունու հանճար ստանալով իմաստնացալ դեպի անմահություն ձգտելու»։ Թվում է սխալ թարգմանված նաև՝ «ևս ապա եթէ որ գտցի, որ և արացի ունիլ զուխտ հաստատութեան հաւատոյ հազիւ հաղիւ»։ Անուշանը «արացի» բառը ուղղել է կարացի, համարյա նույն ձևով էլ հասկացել է թարգմանիչը՝ թարգմանելով. «այնպես որ շատ քչերը կմնան, որ կարողանան հաստատ պահել հավատի ուխտը»։ Հիմա տեսնենք սխալը որտեղից է առաջացել. «Առեմ» բայը բացի յուր բուն նշանակությունից նաև գործ է ածվում որպես օժանդակ բայ և կազմում է պատճառական կերպի բայեր. օրինակ՝ «արա այսր մտանել», «առնիցէ դմեղ աշխատել» (Փարպեցի), «արա տէր վախճան դադարման առնուլ» (Նարեկ ԼԳ, ԶԵ)։

Այստեղ պատմիչի միտքն այն չէ, որ մեկը հավատ ունենա կամ պահի հավատք ուխտը. դրանով ոչ մի բան չէր փոխվի. այլ հեղինակը ուզում է ասել՝ թե մեկը չի լինի որ պահել տա (ժողովրդին) հավատը, որ չուրանան. Ուստի «արացի» բառը պետք է մնա որպես ճիշտ բառ և չփոխվի. այլապես իմաստազրկվում է նախադասությունը։

Մյուս ավելացնենք նաև մի քանի մանր դիտողություններ. օրինակ՝ «այլ Յոհան Եպիսկոպոս», որ նշանակում է՝ այլ էր Հոհան Եպիսկոպոսը. բայց թարգմանված է՝ «այս Հոհան Եպիսկոպոսը»։ 3-րդ գաղության 2 վերնագիրն է՝ «այլ վասն Գրիգորի Եպիսկոպոսի», կարծում ենք պետք է թարգմանել՝ «Գրիգոր Եպիսկոպոսի մասին էլ»։ «Խաղացուցին ի մի վայր ժողովեցին, ի ժամադիր կողմանս յԱյրարատեան գաւառին բանակ մեծ լինէր»։ այս նախադասությունը չի վերաբերում գերիներին, որպես վերագրել է թարգմանիչը, այլ զանազան կողմերից հավաքվող զորքին (տես էջ 16, 3-րդ է)։

Զանց ենք առնում ուրիշ դիտողություններ և անցնում ենք մի քանի բառերի բացատրություններին։

«Արար» բառը նշանակում է՝ կալվածք, գույք, ինչք, նաև ձեռքի շինվածք, բայց և նշանակում է՝ բերք, արդյունք. «վայելեալք յիւրաքանչիւր արարս իւր» պետք էր թարգմանել՝ յուրաքանչիւրը վայելում էր յուր աշխատանքի պտուղները,

բայց թարգմանված է՝ «և բոլորն իրենց բնակության տեղերում
վայելում էին խաղաղություն»:

Հայտնի է, որ որոշ կոնկրետ դոյականներ գրաբարում վե-
րացականանում են. օրինակ՝ փոխանակ ասելով՝ աստուած, ասում
են՝ աստուածութիւն. այդպես էլ՝ «պոռնկութիւն» բառը կարծում
ենք պետք է հասկանալ՝ «պոռնիկ», և «այլ ի պոռնկութենէ
եղեալ ես որդի» հարկավոր էր՝ թարգմանել «դու պոռնկից ես
ծնված» կամ «պոռնկի որդի ես» (5-րդ, 1է): Օրինակ՝ «շրջէր հոգի
աստուածութեան ի վերայ ջուրց» (Ագաթանգեղանոս): «գովա-
բանի առ ի նոցանէ սուրբ աստուածութիւնն» (Նարեկ, 79):

«Բաղմական» բառը նշանակում է բարձ, բազմոց (ոմանք
թարգմանում են նաև գորգ). այդ նշանակությամբ հիշյալ բառը
Բուզանդը գործ է ածել բաղմաթիվ տնգամ (տես 3-րդ, ԺԹ, Ի,
էջ 53. 4-րդ ԾԴ, էջ 172, (չորս անգամ). համեմատիր նաև, «արկ
նմա բազմական» (Յուդիթ ԺԲ, 15): Ամեն տեղ էլ այդ բառը
թարգմանված է նստելու տեղ, փոխանակ թարգմանելով՝ բազ-
մոց կամ ավելի ճիշտ՝ բարձ: Հետաքրքրական է այդ կողմից
բերել 3-րդ դարու թյան ի գլխի հետևյալ նախադասութիւնը,
որ կարծում ենք սխալ է թարգմանված. «Ջօրն դարանակալ
յանպատրաստից յանկարծօրէն յայլակարծուց զնոսա յան-
կարծուստ յիւրաքանչիւր բաղմականի ի վերայ հասեալք ըմբռ-
նէին», որ պետք էր թարգմանել՝ «Դարանակալ զորքը հան-
կարծակի վրա հասնելով՝ բռնում է նրանց հանպատրաստից յու-
րաքանչյուրին յուր բարձի վրա». խոսքը վերաբերում է նաև
թագավորի հետ եղած մարդկանց, որոնց բոլորին էլ բռնում են:
Թարգմանված է՝ «դարանակալ մարդիկ անսպասելի կերպով հան-
կարծակի վրա պրծնելով Տիրան թագավորին հենց նստած տեղում
բռնեցին»: Այդպես էլ սխալ պետք է համարել՝ «անկեալ դնէին ի
ներքոյ եպիսկոպոսանոցին» ի տեղում բաղմականացն» (3-րդ,
ԺԹ). թարգմանված է՝ նրանք եպիսկոպոսանոցում ճաշի սեղանի
տակ ընկած մնացին, այնինչ պետք է թարգմանել. «ընկած մնա-
ցին բարձերի տեղում»:

Բուզանդի «Բաղմականակից» բառը պետք է թարգմանել
«բարձակից» բառով (տես 3-րդ, ԺԹ):

«Կարիք» բառը նույնությամբ թողել է. այնինչ նշանա-
կում է (այստեղ) վիշտ, ցավ, սուգ: «Ջգնացելոցն կարիս մնացելոցն
համարեալ»: Համեմատիր՝ «որչափ ևս առաւել միանգամայն
զհրաժարելոցն սաստիկ կարիս մնացելոցն է համարել» (Կորին):

«Մերձեային աւուրք կարեաց հօր իմոյ» (Ծննդոց Իհ, 41). հունարէնում կարեաց ձևի դիմաց ունենք՝ սուգ:

«Կամակոր» բառը նույնպէս թողնված է նույնությամբ այնինչ «կամակոր» բառը պարարտում բոլորովին այլ նշանակություն ունի քան աշխարհաբարում: «Կամակոր» նշանակում է՝ թյուր, ծուռ, շեղված. համեմատիր՝ «դնացին ընդ ճանապարհս կամակորս» (Դատ. 6, 6). «կամակոր շաւիղ նոցա» (Առակ. Բ, 15). «ի մէջ կամակոր և խեղաթիւր աղգին» (Փիլիպ. Բ, 15): Տես «Արմատական», 3-րդ հատ. «կամակոր» բառի բացատրությունը:

«Պաղոտա» նշանակում է ճանապարհ. Բուզանդի՝ վասն պաղոտայի նանապարհին արտահայտությունը հաշիւադրության ձևով է. թե «պաղոտայ» թե «ճանապարհ» միևնույն նշանակությունն ունեն, բայց թարգմանված է՝ անցուղարձ (տես 3-րդ, Ը): Նույն տեղում «միւս ևս» կամ «և միւս» նշանակում է՝ 2-րդ, դարձյալ, բայց թարգմանված է՝ մի ուրիշ, այսինքն՝ ածական. նույն տեղում «Տանար մայրի» պետք է թարգմանել՝ անտառ-տաճար, բայց թողի է նույնությամբ, որ անհասկանալի է: ԺԱ գլխում (3-րդ դարութիւն) գրված է՝ «և ֆնացելոցն յանցելոց գութ և խնամ կալցին». վիենտիկյան մի ձեռագիր չունի «յանցելոց» բառը. չունի նաև մեր № 3079 ձեռագիրը, ուստի պետք էր դուրս գցել այդ բառը, բայց այն ժամանակ աշխարհաբար թարգմանությունը բոլորովին սխալ է դուրս գալիս, որ է «իսկ ընկածների ֆնացորդներին գութ և խնամք տանին», այնինչ այստեղ խոսքը վերաբերում է կենդանի ֆնացածներին և ոչ ընկածների ֆնացորդներին: 3-րդ դարության ԺԳ գլխում (էջ 35) «վարիցե» պետք է թարգմանել՝ «կառավարի», թարգմանված է՝ վարվի. «լիմել» բայը (5-րդ, Ա, էջ 191) թարգմանված է՝ «համարձակ» և այն էլ այնպիսի տեղ, որտեղ գրված է՝ «լիմելա յարձակեցաւ». 163 ծանոթության մեջ գրված է՝ «որովհետև գործ է ածված հարձակվել բայի հետ, մենք թարգմանեցինք համարձակ բառով». բայց հենց նրա համար, որ գործ է ածվել հարձակվել բայի հետ, ուստի նշանակում է հարձակվել: Գրաբարյան սովորական դարձվածք է անցյալ դերբայը գործ ածել յուր մի հոմանիշ գիմավոր բայի հետ: Օրինակ. «վաղվաղակի յարուցեալ ողջացաւ» (Բուզանդ, 6-րդ, Թ). անցեալ գնաց, խաղացեալ երթայր, փակեալ փայփային, հեռացեալ մեկնեցան, յաճախեալ բազմանայ (տես Չալիխյան-Այալընյան, «Քերականություն Հայկադյան լեզ-

լի», էջ 434 և մեր «Գրաբարի հատընտիր», էջ 40, ծանոթություն 17)։

Բացի այս. այդ բառը Աճառյանը «Արժատականում» բերել է որպես Ալաշկերտի բարբառի բառ «հարձակվել» նշանակությամբ։ Այս բայը «լինել» ձևով շատ սովորական գործածական բառ է իմ մայրենի խոսվածքում (կոտայքի շրջան, Եղովան գյուղ), որ նշանակում է հարձակվել, արագ թափով միանգամից վրա վազել. օրինակ՝ «հընչի ես լքնում էրեխու վրեն. շունը լքնեց վրես»։

«Ձանազան» բառը, որ հոմանիշ է գեղեցիկ բառին (քան զայլս գեղեցիկ զանազան, 3-րդ, Ի, էջ 50) թարգմանված է՝ զանազանվում է։ «Բարեկիր» նշանակում է՝ հավատարիմ. թարգմանված է՝ բարեմիտ (3-րդ, Թ)։ «Անձնիշխան կամոֆ» նշանակում է՝ կամքի ազատությամբ (4-րդ, Ե). թողել է նույնությամբ։ «Վատախորհուրդ վատանշան» պետք է թարգմանել՝ չարամիտ, վատահամբավ (տխրահոշակ). համեմատիր գրքի հետևյալ նախադասությունը՝ «խորհուրդ վատ ի մեջ առին սպանանել զնա»։ Ընդգծված դարձվածքը նշանակում է դավադրություն սարքեցին, չար միտքը հղացան։ Հունարենում այդ դարձվածքի դիմաց ունենք πογγηρδύουαլ բայը, որ նշանակում է՝ չար դառնալ, չարությամբ վերաբերել. համեմատիր նաև՝ «Մերուժան վատանշան» (4-րդ, ԻԴ). «եկն եկաց փոխանակ նորա այս Բասիլիդէս վատանուն վատանշան» («Կոչումն ընծայութեան», Վենետիկ, 1832, էջ 104). «Թշնամիք մեր վատախորհուրդ» (Բ Օրէնք. ԼԲ. 31)։

Գրաբարից աշխարհաբար թարգմանելիս պետք է ուշադրություն դարձվի վերոհիշյալ երևույթների վրա, որովհետև շատ բան թարգմանիչը կարող է հասկանալ, իսկ աշխարհաբար ընթերցողի համար կարող է անհասկանալի լինել. այսպես՝ «ստապեցան» (3-րդ, Ի) մնացել է նույնությամբ. «ձեռ» (3-րդ, ԺԸ) պետք էր թարգմանել ժառանգ, մնացել է դարձյալ առանց թարգմանելու «Աշխարհ» բառը պետք էր թարգմանել՝ երկիր, խորան՝ ննջարան, սենյակ. «Ուամիլասպա գորֆ» պետք է հասկանալ գյուղացիներից հասարակ մարդկանցից կազմված բանակ, որ հակադրվում է՝ «պատրիկ գորք» հակադրությանը (տես 3-րդ, Ի, էջ 52. 4-րդ, ԻԹ, էջ 151)։ «Աթեմացոց քաղաք» մեզ համար անհասկանալի է. պետք էր թարգմանել կամ գրել՝ Աթենք և ոչ Թոդնել նույնությամբ. այդպես էլ անհասկանալի է՝ մեռելներ էր հարուցանում։

«Զօրութիւն» նշանակում է նաև՝ ստացվածք. համեմատիր՝ «զօրութիւն քո և դամենայն դանձս քո բաշխեցից յաւարի» (Ներեմ. ԺԷ, 3). «Եւ աւար առցէ զզօրութիւնս քո և կողոպտեսցէ զինչս քո» (Նդեկ. ԻԶ, 12): Ուստի Բուզանդի՝ «այլք կերիցեն զօրութիւնս (ուղղելի՝ զզօրութիւնս) ձեր», պետք է թարգմանել՝ «ուրիշները կուտեն ձեր բերքը կամ ձեր ստացվածքը, բայց թողնելով՝ է նույնությամբ» (տես 3-րդ, ԺԴ, էջ 41): Այսպիսի դիտողությունների թիվը կարելի է էլի երկարել, բայց այժմ անցնում ենք Բուզանդի բնագրի նկատմամբ մինչև այժմ եղած միջանի ուղղումների քննությանը:

Դեռ շատ վաղուց Բուզանդի բնագիրը ենթարկվել է բազմաթիվ սրբագրությունների՝ սկսած Հայկազյան բառարանից, վերջացրած ներկա թարգմանությամբ:

Մենք սկսում ենք ներկա թարգմանության սրբագրություններից, ըստ որում օգտագործում ենք մեր Մատենադարանի բոլոր ձեռագիրները, կամ ուղղում ենք ըստ մեր հասկացածի:

1. «Երթեալ նորոգեաց անդ գեկեղեցիսն լուսաւոր կարգօք, առաջնոյ Գրիգորի՝ հօրն գործոցն նմանեալ»: Այս նախադասության «հօրն» բառը ուղղված է՝ «ԽԱՌԱՆ» և թարգմանված է՝ «պապի», որ հետևություն է Ն. Մ.-ի: Ն. Մ.-ն չի հասկացել. պետք է «կարգօք» բառից հետո ստորակետը ջնջել և կարդալ՝ «...կարգօք առաջնոյն Գրիգորի, հօրն գործոցն նմանեալ»:

2. «Ակնատեաւնք» կամ «ձկնատեաւնք» (3-րդ, Ը և 4-րդ, ԻԲ), որ համարված է աղվաղված բառ և անհասկանալի, պետք է կարծել, որ առաջացել է «ձկնատեաւնք» բառից, իսկ «հ»-ի անկումով՝ «ձկնատեաւնք», որ սխալ գրությամբ տվել է ձկնատեսանք:

3. «Որում անուն էր յանուն հօր իւրոյ Արտաւազդ». «հօր» բառը նախորդի նման սրբագրված է՝ «ԽԱՌԱՆ» և թարգմանված է՝ իր պապի անունով: Փոխելու պետք չկա. շփոթությունը առաջացել է «իւրոյ» դերանվան պատճառով, որ այստեղ նշանակում է ոչ թե՛ «իւր», այլ՝ «նորա» և վերաբերում է Վաչեին: Գրաբարում հաճախ՝ «իւր» և «նորա» դերանունները շփոթվում են միմյանց հետ. օրինակ՝ «զի իւրոյ արարչին յառաջագոյն պատուիրեալ էր նմա» (Նզնիկ), փոխանակ նորա արարչին. «ապա յղեաց կոչեաց առ ինքն դայգորդն, աղաչեաց զնա առնել ի վերայ նորա աղօթս» (փոխանակ իւր) (Բուզ. 6-րդ, Թ): Համեմատիր նաև՝ «ետես Գողգոթա՝ եթէ մեռաւ որդին նորա» (փոխանակ իւր). հրեշտակն երարձ վերացոյց զԱմբակում զվարսից գա-

գաթան իւր (այսինքն՝ նորա): Տես մեր «Գրաբարի հատընտիր», էջ 39, ծան. 11 և էջ 59, ծան. 42): Համեմատիր նաև Բուզանդի հետեյալ նախադասությունը՝ «Սակայն նորին արեամբն» այսինքն՝ իւր, որ թարգմանված է՝ նոցին (3-րդ, ԺԴ, էջ 40):

4. Բնագրի «կամ զիարդ եղէց բարեխօս վասն ախոցիկ, որք նուաճեցին»։ Վերջին բառը անհասկանալի է. ուղղված է՝ «ստամբակեցան», որ աշխարհաբարի համար անհասկանալի է և ուղղումն էլ կամայական. կարծում ենք հարկավոր է ուղղել՝ «նուաճեալ լինին», մանավանդ որ № 3079 ձեռագիրը ունի՝ «նուաճելինն» (3-րդ, ԺԴ, էջ 42):

5. Չորրորդ դպրության ցանկի (ն գլուխ) «հանդերձ այլովքն պատարագով արձակէր յերկիրն Հայոց»։ սրբագրված է՝ «այլ պատանդների հետ»։ այստեղ պատանդների մասին խոսք չկա. ձեռագրում ունենք՝ «հանդերձ այլովք պատարագօք», ուստի հոլովակա՞ն պատճառաբանությունը վերանում է. մնում է մեկնել «այլ» բառը, որ այստեղ անհասկանալի է. բայց վստահությամբ պետք է ասել, որ այդ «այլ» բառը պատկանում է «հանդերձ ցախարաօք» դարձվածքին, որ ունենք մի տող վերևում և որ այն անցել է մտքով մյուս տողը «հանդերձ» բառի գուցե որոշակի մեջ. պետք է լինե՞ր՝ «հանդերձ այլովք նախարարօք»։ և իրոք վերնագիրը ունի՝ «հանդերձ պատարագօք», առանց «այլովք» ձևի (տես էջ 81):

6. Պատք է սխալ համարել նաև Նորայրի ուղղումը, որ է «որպես առ առջին թագաւորաւքն նուաճեալք յիւրաքանչիւր չափու», որ բնագրում է... «առաջին թագաւորքն նուաճեալք իւրաքանչիւր չափու»։ իմաստը պարզ է. Արշակը կարգավորում է այնպես, ինչպես նվաճել էին (այսինքն՝ երկար ժամանակի ընթացքում ստեղծել էին հատուկ կարգ ու կանոն) 1-ին թագավորները (4-րդ, Բ, էջ 67):

7. 4-րդ դպրության ԾԴ գլխի՝ «իբրև տեսին զնոսա արկին զերկոսեանն զարքայն Արշակ և զսպարապետն Վասակ, և պահէին զնոսա արձակ ի մէջ ազատագունդ փուշտիպան զօրացն» պարբերությամբ համարված է աղավաղված. աղավաղված չէ, պետք է լինե՞ր՝ «արկին և պահէին զերկոսեանն ի մէջ...» պարզապես անհետևողություն է. այդ մասին տես մեր «Գրաբարի հատընտիր», էջ 16, ծան. 23:

8. 5-րդ դպրության Ե գլուխը Բուզանդի անհասկանալի հատվածներից է։ Դժվարությունը մեծ մասամբ աղավաղումնե-

քից է առաջացել և երբեմն էլ տողերի կրկնությունից, այսինքն միևնույն բառը կամ երբեմն մի ամբողջ կամ կիսատ նախադասություն, կրկին անգամ է արտագրվում: Օրինակ, նույն գլխի 212 էջի վերևից 5-րդ տողի՝ «թագաւորաց յիշխով զայն մարդ, որ յայն բերդի դռ եգեալ է»․ այս ամբողջը հպետք է լինի, ինչպես որ հկա № 3079 ձեռագրում:

Նույն էջի 18-րդ տողի՝ «Երթ տուալ լիցի քեզ, որ ինչ (պետք է լինի՝ դոր ինչ) յինէնս խնդրեցեր փոխանակաց քոց»․ (մեր ձեռագրում՝ «փոխանակ քոց և ոչ՝ քեզ»), «թարգմանված է՝ «ինչ որ դու ինձանից խնդրեցիր քո ծառայութեան փոխարեն»․ այսինչ այստեղ Շապուհը շեղտում է Դրաստամատի տոհմատիրությունը, վերջին շառերը պետք թարգմանել՝ «քոնոնց համար և ոչ՝ քեզ համար»:

9. 5-րդ դպրութեան ԼԲ գլխի (էջ 239) «կարգեալք պաւկեալք» արտահայտութիւնը համարել է աղավաղութիւն և ուղղել է՝ «կարգեալք պատեալք»։ «Պսակել» բառը դրաբարում նշանակում է՝ շրջապատել, դրա համար համեմատիր նույն էջի՝ «պատեալ պաւկեին» զարձկածքը, համեմատիր վերևում բերված «Լկնեալ յարձակեցաւ, յարուցեալ ողջացաւ...» և այլն: Ապա այդ բայը նույն իմպատով ունենք գործածված նաև այլ գրողների մոտ (տես «Նոր Հայկազյան բառարան», 2-րդ հատոր, էջ 663, 1-ին սյունակ, 1-ին բառ):

Մի քանի խոսք էլ ուրիշների սրբագրութեան մասին: 3-րդ դպրութեան Գ գլխի (էջ 8) «ի կնոջի քազաւորեմ» ընկ. Աճառյանը կարծում է պետք է ուղղել՝ «ի կնոջէ թագաւորին»։ Բայց՝ «կին թագաւոր» մի բառ է և նշանակում է՝ թագուհի: Այդպես էլ՝ կին մարդ, այդ մարդ, այդ ծառայ, այդ թշնամի և այլն. համեմատիր Բուզանդի՝ «ղի ասեն՝ թէ զայր եպիսկոպոս դու տնիժեր» (6-րդ, Թ՝) (տես մեր «Դրաբարի հատընտիր», էջ 39, ծանոթ. 12):

Նույն դպրութեան Ե գլխի (էջ 11) «և առնելոց եին ի նմանէ հովիւքն գլխաւորք»․ ընկ. Աճառյանը ուղղում է՝ «շառնելոց»․ կարծում ենք պետք է կա ուղղելու. «առնելոց» ձևը «առնիմ» բայի դերբայն է, իսկ «առնիմ» բայը շատ հաճախ նշանակում է՝ լինել, դառնալ, օրինակ՝ «և յորժամ բանան պատեանքն, յայնժամ առնի նոցա դիւրին թուչել» (Բարսեղ Կեսաբացի, Վեցօրեայք). Առնիմ մահը տարածված (Եզնիկ). և ոչ ասաց թէ չառնին ուրախ (Ոսկ, Մեկն, Եսանայ). ամենայն ի-

դու, որ նոյնաբանութեամբ յայլ լեզու թարգմանիցի՝ մթնի առնի»¹

«Եւ գտանէին զնոսա լոկ ցամաքեալ զկճղացեալ զոսկերա նոցա»։ մեր ձեռագիրը (3079) ունի «զնոսա»-ի փոխարեն՝ «նոցա»։ Եթէ ընդունենք որ այս ճիշտ է, ապա նախադասութիւնը պետք է թարգմանենք՝ «գտան նրանց միայն ցամաքած և կըճղացած (կճեղ բառից, որի փոփոխական է պճեղ) ոսկորները», բայց այն ժամանակ վերջին «զնոցա» բառի և «զկճղացեալ» բառի դ-ն մնում է անհասկանալի, ուստի պետք է թարգմանել՝ գտան նրանց լոկ ցամաքած և նրանց կճղացած ոսկորները։ Աճառյանի զկճղանալ որպէս սաստկական բայ անընդունելի է (տես «Ձեռագրական սրբագրութիւններ Փալստոս Բուղանդի մեջ», էջ 155)։

«Վասն օրոյ միոյ կարծիս առնել զայն ամբոխ խռովութեան ի մոլեկան առնէն Շապուհ Վարազայն»։ Աճառյանը ջնջում է «կարծիս» բառը, բայց այն ժամանակ «զայն» հայցականը «ի մոլեկան առնէն» բացառական ներգործող խնդրի հետ չի համապատասխանում և նախադասութիւնը իմաստազրկվում է։

Ճիշտ է, նման անհետևողութիւններ Բուղանդը մի քանի տեղ ունի, բայց դրանք մեծ մասամբ ուղղվում են. համեմատիր. «և առաքեալ զՎարդանն զմեծ նախապետն յարքայէն Արշակայ»։ Խնդիրը հայցական է և երկու բառի վրա էլ «դ» է դրված, ուստի այդ չի կարող սխալ լինել. մնում է «յարքայէն Արշակայ»։ № 3079 ձեռագիրը ունի «Արքայէն Արշակայ», որտեղ «արքայէն» բառի «է»-ն հենց այդ ձեռագրում շատ նման է «ի»-ն և հաճախ չենք տարբերում այդ երկու տառերը. ուստի պետք է անպայման ուղղել՝ արքային, որ միանգամայն ճիշտ կլինի։ Այժմ դառնանք վերևի նախադասութիւնը. «կարծիս» բառի «ս»-ն ավելորդ է և լսելիքի սխալ, կամ ա-ից առաջ պատահաբար հանդէս եկած՝ իսկ «զայն» պետք է ուղղել՝ այն, և այն ժամանակ կստանանք մի կանոնավոր նախադասութիւն՝ «Վասն ձիոյ միոյ կարծի առնել այն ամբոխ խռովութեան ի մոլեկան առնէ Շապուհ Վարազայն», որ կթարգմանվի՝ «մի ձիու համար է համարվում արված կամ եղած այն պատերազմը՝ ստոր Շապուհ Վարազի կողմից» (Տես 4-րդ, ԻԱ, էջ 57)։

¹ Օրինակները քաղում ենք մեր «Գրաբարի հատրնտիր», էջ 63, ծանոթութիւն 28, և էջ 118, ծանոթութիւն 42։

5. «Զիւրաքանչիւր զօրս բաժանեալ յամենայն կողմանց սահմանացն Հայոց սահմանապահս կացուցանէր»։ Ընդգծված բառերը Աճառյանը ուղղում է՝ յամենայն կողմանս. բայց ճիշտ կլինի կարդալ այսպիսւ. «Զիւրաքանչիւր զօրս բաժանեալ, ամենայն կողմանց սահմանացն Հայոց սահմանապահս կացուցանէր»։ այսպիսւ է նաեւ № 3079 ձեռագիրը (Բուզանդ, 4-րդ, Բ, էջ 67)։

6. 4-րդ դպրութեան Գ (էջ 71) և «այսօր տարապարտուց սիրէք դուք զիս տարապարտ, և վաղիւ... սա պետք է կարդալ՝ «այսօր տարապարտուց սիրէք դուք զիս, տարապարտ և վաղիւ ատելի և թշնամի»։

7. «Եւ գերեզարձ առնէր զզորս անիւ քարոզութեան փառացն քրիստոսի զկէս, և զայլս գնովք փրկանօք ազատէր» ուղղում ենք. «գերեզարձ առնէր զզորս անիւ քարոզութեան փառացն քրիստոսի, զկէս գնովք, և զայլս փրկանօք ազատէր», (4-րդ, Դ, էջ 78)։

8. 4-րդ դպրութեան Ե գլխի՝ «կաշառակութս» բառը № 3079 ձեռագրում գրված է՝ «կաշակութս», դուցն պետք է կարդալ՝ կաշառակութս. իսկ նույն տեղում՝ «կաշառակիս» բառը նորայրը, ապա Աճառյանը ուղղել են՝ «կաշառաբեկս»։

9. Զի փիլիսոփայական արուեստին խնոյր արկանէր հանապազ զամենայն դուր բացեալ զբերանս հերետիկոսացն»։ Նորայրը յուր «Հայկական բառաքննութեան» մեջ (էջ 60) «արկանեք» ուղղում է՝ «առականէր»։ № 3079 ձեռագիրը ունի՝ «արկան»։

10. «Որչափ ի մատաղութեանն հասակին ըստ աստուածային իմաստութեանն գնացեալ լինէր, նոյնչափ յաւագութեանն ի լիութեան շաղաշատութեան հասաւ»։ Ընդգծված բառերը ըստ ձեռագրի ուղղել՝ «ի լիտութեան ի շաղաշտութեան»։ համեմատիր «շաղաշուտ խօսք» (Բուզ., 6, Ը)։

11. «Ո՞ր գիտէ, զկնի նորա նմա հնար լիցի յափշտակել»։ Ուղղել «զկնի»։ բառը՝ «Զկիմն» ըստ ձեռագրի (№ 3079), (4-րդ, ԺԴ, էջ 119)։

12. 4-րդ, ԺԶ, վերնագիրը. «կամ զիարդ Վասակ Մամիկոնեան սպարապետն Հայոց պայանանէր զսորակալ ասպատառանին արքային Պարսից»։ Ընդգծված բառը Աճառյանը ուղղում է՝ «ծիակալ»։ № 3079 ձեռագրի ցանկը ունի «զօրակալն», որ երկու անգամ է գրել. մի տեղ շփոթվել 3 բառ առաջ է գրել, ապա ջնջել է (լավ տեսանելի), իսկ հետո գրել է յուր տեղում։ № 4584

ձեռագիրը վերնագիրները չունի, իսկ ցանկում ունենք՝ «զօրահալն»։ Պետք է ընդունել «զօրահալ» ձևը «պետ» նշանակությամբ և ոչ անպայման «զորապետ», ինչպես որ «Բաղաբարմ» բառը ոչ թե նշանակում է «քաղաքի պատ», այլ «պարխալ» առհասարակ։ (Տես Բուդ. 3-րդ, Գ)։

13. 5-րդ դարում թեև Ա գլխի վերնագիրն է. «Յաղագս Թագաւորիոյ Պապայ յերկրին Յունաց, և գալոյ ի Հայս և յինքն ունելոյ զաշխարհ իւր և կամ որ ինչ միանգամ գործեաց և յաջոյնցաւ նմա»։ Ինչպես տեսնում ենք, համարյա անմիտ է այս վերնագիրը. այսպես էլ աշխարհաբար է թարգմանված։ «Պապի թագաւորելը հունաց աշխարհում և Հայաստան գալն ու աշխարհին տիրելը...»

Ուղղում ենք ըստ № 3079 ձեռագրի՝ «Յաղագս թագաւորելոյ Պապայ, որ կայր յերկրին Յունաց, և գալոյ ի Հայս և յինքն ունելոյ զաշխարհս իւր (բուն ցանկում և իքն առնելոյ զաշխարհն հօր իւրոյ Արշակայ և կամ որ մի անգամ) և կամ զոր ինչ ի մի անգամ գործեաց՝ յաջոյնցաւ նմա»։

14. 5-րդ դարում թեև Դ գլխի (էջ 202)՝ «Եւ ութ հեծելով թույլ ետ նմա փախչել...», ուղղում ենք «Եւ Ընդ հեծեալս...»։

Ծենք չենք կարող այստեղ բերել այն բոլոր ճշտումները, որոնք մեր ձեռքի տակ կան, դրանցից հիշեցինք շատ քչերը և այնպիսիները, որոնք ոչ միայն քերականական արժեք են ներկայացնում, այլև կապ ունեն իմաստի հետ, բայց այնպիսի ուղղումներ, որ դուռ քերականական են (ինչպես՝ «ոչ ոք նստի» (էջ 70) պետք է լինի՝ «ոչ ոք նստցի», «ի բաց խզեալ», պետք է լինի՝ «ի բաց խզել»։ «որ նոցա կարող լինել», «որ նոցա «կարող լինէր» էջ 71։ «Կոչնցի գերիցունս եկեղեցոյն» պետք է լինի՝ «եկեղեցեաց» (էջ 169)։ նույն տեղում՝ «զի նոյն աւետարանն ածէ», պետք է լինի «ածցէ»։ «Եթէ կայ յուխտի քո և պահէ պաշինս քո...» փոխանակ՝ «պահեսցէ»։ Եվ շատ ու շատ նման բառեր ու ձևեր, որոնք խիստ կերպով ազդել են Բուզանդի բնագրի վրա և շատ տեղեր դարձրել անհասկանալի։

Ծի քանի խոսք էլ բացթողումների մասին։ Նախ դիտարկելով բացթողումները 5-րդ դարում թեև Դ գլխի 201 էջ վերևից 5-րդ տողից մինչև 202 էջի 4-րդ տողը. ուղիղ մի էջ։ Վերևից 4-րդ դարում թեև Ե գլխի 83 էջի XIII տողից մինչև 88 էջի 2-րդ տողը՝ մոտավորապես հինգ էջ՝ Ներսեսի քարոզը, նման բացթողումներ մեր կարծիքով չպետք է լինեին։ Բուզանդը

տալին անդամ է թարգմանվում. պետք էր լրիվ բնագիրը բա-
յահայտել:

Հիշենք նաև աչքից փախած բացթողումները, որոնք, ճիշտ
է, շատ անդամ բան չեն փոխում, բայց չպետք է տեղի ունե-
նային: Այսպես օրինակ՝ 3-րդ, Գ (էջ 7) «Զօր տօնին», նույն
տեղ (էջ 31) «սպանումն», «ի դայթակղի» (էջ 47) և այլն:

Թարգմանության լեզվի մասին խոսելիս ասացինք, որ հա-
մեմտաբար լավ է թարգմանված և հետեւել է Բուզանդի խա-
ղացիուն ունին. բայց բայերի ժամանակները երբեմն խանգարում
են թևեթեությանը: Այսպես, զբառարի պատմական ժամանակը
մեծ մասամբ անցյալ անկատարն է, իսկ աշխարհաբարում կամ
ներկա, կամ կատարյալ, իսկ թարգմանության մեջ մեծ մասամբ
պահված է անցյալ անկատարը, որ առաջացնում է անորոշություն
և մեռցնում է կենդանությունը, մանավանդ եթե դրան ավե-
լացնենք այնպիսի բառերի գործածություն, որոնք կամ թունդ
բարբառային են և կամ խիստ զբաբարյան, որ մնացել են
չթարգմանված, կամ բոլորովին նոր գործածված բառեր են, կամ
թիված: Օրինակ միջևհան (էջ 120), սերահատվել (էջ 96), մերի
(անտառ, էջ 96), գտհավեթ (որպես դոյական), քաջարանց (105),
հետել—(էտել) (302), հյուծել (գուցե տառախալ)—հյուսել, խրեց-
րեց (251), մոռեթները կախել (172, 217) պետք է թարգմանել
«ուռեց փքվեց», «գետին կոխել», փոխանակ «գետին տանել»
(էջ 218): Ղաղիշ քաշել—(բանակել) համեմատիր Ղաղիշ (կամ
ղաղիշ) ամեալ յամուր տեղաղջ (Բուդ. 4-րդ, ԼԶ, ԽԳ, ԽԸ): Ի
միջի նորա ամեալ զաղիշ՝ բանակէին» (Փարպեցի):

«Հարված էր իրեն» (ծան. 29), փոխանակ՝ «հարած» էր,
«Աչառություն» և այլն:

Այս դիտողությունները բնավ էլ չեն իջեցնում հանգուցյալ
գիտնականի թարգմանության արժեքը, և մենք հավակնություն
չունենք կարծելու, թե մեր բոլոր դիտողությունները անսխալ
են և առարկություն չեն ընդունում: Սրանք միայն կարող են
պատճառ դառնալ առավել ունակների համար, որոնք կարող են
ոչ միայն մեր դիտողությունները ճշտել, այլև շատ ու շատ
հարցեր, որ մենք բաց թողինք նորանոր փաստեր հավաքելու
համար, կքննվեն ու կլուծվեն «ի շահ և յօդուս» մեր մայրենի
գրականության ու բանասիրության, սովետական նոր հայագի-
տության տեսանկյունով:

